Հաշվետվություն

2025 թվականի փետրվարի 11-ից 13-ը Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Թեհրան, փետրվարի 11-ից 13-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Իրանի Իսլամական Հանրապետության ազգային աշխարհագրական կազմակերպություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Երկրատարածական տվյալների ոլորտ. խելացի կառավարման հիմք» թեմայով Իրանի 4-րդ միջազգային աշխարհագրական ցուցահանդեսին:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման հիմնական թեմաներն էին.

- ✓ Երկրի հեռահար զոնդավորում,
- ✓ Գեոդեզիա, քարտեզագրություն,
- ✓ Հիդրոգրաֆիա (ջրագրություն),
- ✓ Օդերևութաբանություն և կլիմայագիտություն,
- ✓ Երկրաբանություն և օգտակար հանածոների հետախուզում,
- ✓ Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր (GIS), ծրագրային ապահովումներ և սարքավորումներ,
- ✓ Օդային լուսանկարահանման քարտեզագրում, ինքնաթիռներ և անօդաչու թռչող սարքեր,
- ✓ Աշխարհագրություն, հողերի չափագրում և քաղաքաշինություն,

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Թեհրանում մեկնարկած «Iran Geo» 4-րդ միջազգային ցուցահանդեսին մասնակցում էին պաշտպանության նախարարության պաշտոնյաներ, կազմակերպությունների ղեկավարներ, համալսարանների և գեոմատիկայի ոլորտի մասնագետներ:

Ելույթ ունենալով բացման արարողության ժամանակ՝ ԻԻՀ պաշտպանության նախարարության աշխարհագրության կազմակերպության ղեկավար, բրիգադի գեներալ Մաջիդ Ֆախրին անդրադարձավ հիմնական գլոբալ մարտահրավերներին:

Նշվեց, որ կլիմայի փոփոխությունը, ջրային ռեսուրսների ճգնաժամերը, շրջակա միջավայրի աղտոտվածությունը, միգրացիան, աշխարհաքաղաքական մրցակցությունը, պարենային անվտանգությունը և երաշտը մարդկության առջև ծառացած ամենահրատապ խնդիրներից են:

Ըստ գեներալ Ֆախրիի՝ գլոբալ մարտահրավերների առնվազն 70 %-ը առնչվում է աշխարհագրությանը և պահանջվում է գտնել այնպիսի աշխարհագրական լուծումներ, որոնք կախված են ճշգրիտ և հուսալի տարածական տվյալներից, ինչպես նաև գեոդեզիական, ֆոտոգրամետրիայի, հեռահար զոնդավորման և գեոինֆորմատիկայի առաջընթացներից:

Ցուցահանդեսի ժամանակ կարևորվեց նաև աշխարհատարածական տեխնոլոգիաների աճող ինտեգրումը արհեստական բանականությանը, համացանցի և կապի տեխնոլոգիաներին:

«Աշխարհատարածական տվյալների ոլորտ. խելացի կառավարման հիմք» խորագրով ցուցահանդեսը համարվում է Արևմտյան Ասիայի աշխարհատարածական արդյունաբերության ամենամեծ հավաքը, որը նպաստում է գիտելիքի փոխանակմանը ոլորտի մասնագետների, հետազոտողների և քաղաքականություն մշակողների միջև:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Իրանի Իսլամական Հանրապետություն կատարած այցի շրջանակներում հանդիպեցի Իրանի պաշտպանության նախարարության աշխարհագրության կազմակերպության ղեկավար, բրիգադի գեներալ Մաջիդ Ֆախրիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեց Հայաստանի և Իրանի մասնավոր ընկերությունների միջև համագործակցության հնարավորությունը:

Իրանցի գործընկերները ներկայացրին օրթոլուսանկարների ոլորտում իրականացված աշխատանքները՝ կիսելով իրենց փորձը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամությունը հետագա համագործակցության զարգացման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 17.02.2025 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում N93-Ա 04.02.2025թ.

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան
4 Գործուղման վայրը Իրանի Իսլամական Հանրապետություն քաղաք Թեհրան
5 Գործուղման ժամկետները 11.02.2025-13.02.2025թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
1. գիշերավարձ, 2. օրապահիկ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2025 թվականի ծախսերի նախահաշիվ)
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիաճառայության արժեք (դրամ)	144.0	144.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակ		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	
	Օրերի քանակ		
	Ընդամենը (դրամ)	-	-
Ընդամենը ծախսեր (դրամ)			144.00

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական կարգի պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
18.02.2025թ.